# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**27 հունիսի 2017 թվականի N 88-Ա**

## Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի «դ» և 5-րդ կետի «ա» ենթակետերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2017 թվականի հունիսի 15-ի N 01/13/1/1486-17 գրությունը և *Ռ. Հակոբյանի* համաձայնությունը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետի ***(ծածկագիր՝ 66-2.1-7)*** քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ***Ռազմիկ Միհրի Հակոբյանի*** հետ 2017 թվականի հունիսի 27-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Աշխատավարձը՝ ***310 858*** *(երեք հարյուր տասը հազար ութ հարյուր հիսունութ)* ՀՀ դրամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի մայիսի 30-ի *«Ջ. Բուրուշյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին»* N 76-Ա կարգադրության 2-րդ կետը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարությանը *(վարչատնտեսական բաժնին)* Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Կ. ԳՈՒԼՈՅԱՆ**

**2017 թվականի հունիսի 27**
**ք. Հրազդան**